



ԿՄԲՐԱՆՔԻ

ԱՐԶԱԳԱՄԵՐ

ԵՐՐՈՐԴ ՏՍՐԻ

ԹԻԻ 89

5 ԱՊՐԻԼ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԼԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 5 Ապրիլ 1913 Թիւ 89

«Մերական Քառասնյայեան Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանց շաբաթաբերը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մերի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Գ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուանմարտ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ԱԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՊԱՏՐԻԱՐԷ ՈՒ ԲԱԹՐԻԳ ԲԱՌԵՐԸ

«Մէճմուա»ի 5068 թիւին մէջ բաց համակ մը գրած է Թ. Էֆ. Նիկողոսեան, Արհ. Արքիեպիսկոպոս Արքեպիսկոպի դէմ, լի սոսճնական նախատինքնորով, յաճախակի կոչելով զինքը՝ սգեհ, անցներէլի սգիսութեան տէր, գիտնալ չուզող, համբակ, անհարակ, բառախաղ ընող, ճեմարիսը կեղծող, եւայլն:

«Պատին ի պատուողի», կ'ըսէ առակը: Պատուաւոր մէկուն դէմ ուղղուած անճանկան նախատինքնը լոկ կրքի արտայայտութիւն մը՝ և նախատողին արժանիքին չափն է:

Յօգուածագիրը՝ տգիտական, թերի, անհմուտ և սխալ կը գտնէ այն զաղախարը

զոր Նորին Արհիպատուութիւնը պարզած էր իր քարոզին մէջ թէ՛ Ս. Պատարագի մէջ Ամենապատիւ Թեոքեան Կաթողիկոսը իբր Պատրիարք կը յիշենք և ոչ իբր Բարրիգ, այսինքն՝ իբր Հոգեւոր Պետ, և ոչ իբր Ազգապետ: Ասոր դէմ երկու առարկութիւն կը ընդէ. 1. թէ՛ քաղաքական իշխաններ եւս կը յիշատակուին Ս. Պատարագի մէջ. 2. թէ՛ պարզ քահանայ Բարրիգներն ալ ժամանակին կը յիշուին: — Յետոյ՝ կը խնդրէ որ այս երկու բառերու ստուգաբանութիւնը և նշանակութիւնն ու առումը ճշգուին. ոյր վասն և կը զարուլէ Կ. Արձագանցի, «Մինչեւ հիմակ այս մասին տրամաբանօրէն ու պատմականօրէն յօդուածէ մը խուսափումն» (տրամաբանական ու պատմաբանական յօդուած ըսել կ'ուզէ անշուշտ):

Սակայն կ'երեւի թէ յօդուածագիրը թերթերը առանց ուշադրութեամբ կարդալու՝

կ'ամբաստանէ միայն . Կ. Արձագանգ ստէպանգամ յիշատակած է թէ Պատրիարք բառը բացարձակապէս հոգեւոր իշխանապետութիւն ցոյց տուող բառ մըն է , եկեղեցական առումով միայն կը գործածուի . Ի մէջ այլոց , այս խնդրոյս վրայ բաւական մանրամասնութեամբ գրուած է Մուխիսին կողմանէ տաճկերէն յօդուածի մը մէջ , Բ . Տարի , թիւ 39 , էջ 163 , զոր հոս օգտակար կը դատենք արտասպել . քանի որ ճշմարտութիւնը կը խօսի , և թէեւ գրողը աշխարհական մըն է , բայց՝ ինչպէս կ'ըսէ , գիտցողներուն զիմեր է և սորվեր է , և իր սխալ գաղափարն ալ փոխեր է . Նիկողոսեան էֆ . ալ աշխարհական ըլլալով , փոխանակ ասկէ անկէ մոլար ազդեցութիւն առնելու , ուղղախօս աշխարհականի մը խօսքերէն հնար է օգտուի : Ահա՛ այդ կտորը .

Ձիւրա ֆիլիսա տրուինքէ հեր եյ իպստէք , վէ պիտակէ պէյն հեր եյ ռուհանիյէք սիր . ռուհանիսկն սինտար էհալիյի մահրում իքմէ՛ պէյիւք իաքա սր : Մա մաճիւն պու ճիւրաք այնի վագրքսա ճէհալէք սիր . զիւրա Ռիւքա . Կաթողիկոս էճնիս իսմիսի Ձայնաւորսա ճէպրէն զիւր իքսիւքմէ՛ կիւնահսան պազգա՛ սպէս սիր . զիւրա քիւ պասարազլարսա զիւր իսիւքմէ՛ մը . պու գասար նասան ասալէք խիսթիյան գալպիսէ եագրքը՛ մը . Պագրլար սա , զիւր իսիսիյիսէ , մասամ ֆի Բաքրիլիսէն իսգաք իսիսի , օնուն իյին ՊԱՏՐԻԱՐԿ ֆէլիմէսի գուլլանըլմամայր տէյօլար : Տօդալու սէյլմէք իյին պէն սէ պու էճֆեսարս իսիւ , ժագաք պիլէլէրէ սօրսուս , անլսւքմ , գանաք կէքիքսիւ ֆի , պու՝ սօդուս տէյիլ սիր : Ձիւրա ԲԱՏՐԻԿ ֆէլիմէսի հեր նէ գասար Պատրիարք ֆէլիմէսիսէն պօզմա իսէ սէ , էլիալէքի հագիսի սրճ ճիսմանի պիւր մէմուրիյէք իյմա իսէր վէ պու մէմուրիյէք՝ ռէսիս ռուհանիյէ վէրիլիւր , վէ իքթ պու ռէսիս ռուհանի սրճաքըն իյմա իսէն ֆէլիմէ պատրիարք սր ֆի հայրապետս քերէմէ օլունըր : Ձաքէն Բաքրիլ մէմուրիյէքիսին ինսարնսան , եանի ժաքին Սուլթան Մէհմմէսէն չօգ էվլէլ պու ֆէլիմէ վէ իյմա իքսիյի պու ռիստէքի ռուհանիյէ մէվնոս իսի . 1500 սէնէյի միւքէնալը սր ֆի պու պատրիարք ֆէլիմէսի ֆիլիստէ միւքսամէլ սիր : Երմէնի Գաթօլիլէրէս իսէ , սահա միլլէք այրըմագսան վէ բաքրիլիլ ժէրմանը ալիբանը վէրիլմէգէն չօգ էվլէլ Ձմատ Կաթողիկոսլար Պատրիարք Տանն Կիլիկիոյ քէսմիյէ օլընըր վէ էօյլէ իսգա իսէրլէր իսի . Պունըն սա սրըր տու սր ֆի , Բենեդիկտոս ԺԴ . պու իւնվանը ինսան էյլէսի . վէ պատրիարք ֆէլիմէսի ֆիլիստէ ռուհանի մանասընա , Կաթողիկոս ֆէլիմէսիսէն չօգ պէյիւք սիր . զիւրա էսկի գէմանսա պիւր Պատրիարքն հիւքմիւ

վէ իսարէսի քահրընսա վասի էյալէրլէր պուլունըր իսի . հալպու ֆի , Կաթողիկոս աննագ պիւր էյալէք իսարէսինէ մէմուր իսի . չունի Բուքիլէրէսիլիսէն հինուգ խիսթիանըլա տէմմիւս օլան պիւր էյալէքին ռէսիսի Կաթողիկոս քէսմիյէ իքմէք ասէքի մագպուլ իսի . պազէն պիւր Պատրիարքն քահրը իսարէսինէ պուլունան միւքէսսիս էյալէրլէր սէ պիւր իֆի Կաթողիկոսլըգ սալիս պուլընըր իսի : Վէ մասամ ֆի Ս . Աքոն սահա պէյիլիւք օլան պու էյգապը Կաթողիկոսա վէրմիւս , նի՞ չին օ իսմ զիւր իսիլմէյէնէ : Վէ պու յիւսասկոսիլան մուսմէլէսի սրճ ռուհանի օլսըր հալէս , ճէմաարըն վէ ճիսմանիլէրին , հաքա պասարագ եաքան ֆահանալարըն ֆէյլիսէ պաղլը օլամագ , օնլար սա պիւր ֆէլիմէ տէյիլիսէլմէլէր , եօգսա խաքա էսէրլէր :

Յայտնի է ուրեմն որ Պատրիարք բառը եկեղեցական բառ մըն է , յունարէն Բաքրիարխա բառին տառադարձութեամբը , նշանակելով՝ կա՛մ Գաւառապետ կա՛մ Հայրապետ , նուիրապետական ամենաբարձր տիտղոս ու պաշտօն , յետ Բանանայապետականին : Այդ բառը և պաշտօնը Ս . Եկեղեցւոյ առաջին դարերուն մէջ ծագում առած է , և գլխաւոր հինգ Պատրիարքներ կային . 1 . Հոռովմայ Բանայապետը , որ Պատրիարք Պատրիարքաց կը կոչուէր . 2 . Կ . Պոլսոյ , 3 . Երուսաղէմայ , 4 . Անտիօքայ , և 5 . Աղեքսանդրիոյ Հովիւները : Ժամանակաւ ուրիշ Պատրիարքական Աթոռներ ևս սահմանուեցան , և նոյն իսկ հերետիկոսներ պահեցին նուիրապետական այս կարգը : Եւ հիմա նոյն իսկ էջմիածնի Կաթողիկոսը , չունենալով ֆէրման , ինքզինքը կը կոչէ « Պատրիարք ամենայն Հայոց » :

Իսկ Հայ-Կաթողիկէ Կաթողիկոսներուն Պատրիարք բառը յատկացուած է անոր համար որ՝ Կաթողիկէ Ս . Եկեղեցւոյ Բանայապետն Բենեդիկտոս ԺԴ . մեր առաջին Կաթողիկոս Արքահամ Պետրոս Ա . ի ու իր յաջորդներուն շնորհեց Կաթողիկոսութենէ շատ աւելի բարձր եղող այս նախնապետական յորջորջումը . և ԺԸ . դարու կէսէն ըսկըսեալ Ձմմառու Հայ-Կաթողիկէ Կաթողիկոսունք , որոնք ո՛չ Յերման ունէին և ո՛չ աշխարհային ազգապետութիւն , կը կոչուէին և կը ստորագրէին՝ « Պատրիարք Տանն Կիլիկիոյ » . Եւ ահա սոյն նուիրապետական իշխանութեան պատճառաւ է որ կը յիշուի Պատրիարք Ս . Պատարագի մէջ . և Պատար

բազամատոյց գրքին մէջ այս բառով գրուած է՝ Ս. Բահանայապետէն վերջը. «Եւ զԵրջանիկ Պատրիարքն մեր զՏէր Ա. Ա.». յետոյ կուգայ՝ «զՆախագահն մեր. կամ զԱրքեպ. ն կամ զԵպս. ն մեր» եւ այլն։ Պէտք է դիտել նաեւ թէ այս ձեւը այսինքն Պատրիարք յիշատակութիւնը կայ նաեւ Պատարագամատոյցին մէջ որ Վենետիկ տպուած է 1823ին, այսինքն մեր հասարակութեան կազմակերպութենէն եօթը տարի առաջ երբ դեռ բնաւ գոյութիւն չուէր Բաքիի կամ Բաքիի գոյութիւն։ Որով յայտնի է թէ Պատարագի մէջ պէտք է Պատրիարք բառով ըլլայ յիշատակութիւնը, և ոչ ոք, քահանայ կամ աշխարհական, կարող է զայս փոխել առանց յանցանքի։

Իսկ Բաքիի բառը նորահնար եւ նորակերտ բառ է եւ Բաքիաւիսա բառէն աղաւաղեալ։ Թէեւ հին արարներուն դործածութեան մէջ վերոյգրեալ բառը Եկեղեցական իմաստով կ'առնուէր, սակայն Սուլթան Մէհմէտ Զաթիհէն սկսեալ կը գործածուի նոր իմաստով մը, այս ինքն՝ հոգեւոր Պետի, որ Օսմ. կառավարութիւնը կը ճանչնայ իբր Ազգապետ։ Բայց որովհետեւ ազգապետը կրնայ ըլլալ երբեմն պարզ քահանայ կամ նոյն իսկ աշխարհական, հետեւաբար Բաքիի եղողը անպատճառ հոգեւոր պետ ալ եղած չէ՝ միշտ, թէեւ յետոյ զայս իբրեւ պայման որդեգրեց Օսմ. Պետութիւնը։ Ուստի Բաքիի գոյութիւնը՝ Տէրութեան առումով, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Օսմանցի հպատակաց մի մասին աշխարհային վարչութեան՝ արդէն օրինաւորապէս կարգուած հոգեւոր Պետին յանձնումը։ Ուստի Բաքիի գոյութիւնը լոկ աշխարհային իշխանութիւն մըն է. արդէն ո՛ր եւ է կառավարութիւն, մանաւանդ այլապէս, չի կրնար Եկեղեցական իշխանութիւն տալ. այլ կը ճանչնայ միայն զայն. ուստի հոգեւոր Պետի իշխանութիւնը բոլորովին անկախ է Բաքիի կազմէն իշխանութենէ. որով Պատրիարքութիւնը (հոգեւոր ըլլալով), էական է, իսկ Բաքիի գոյութիւնը՝ պատահական. հետեւաբար Բաքիի գոյութեան ջնջուիլը բնաւ չի կրնար վնասել Պատրիարքութեան, որ իր

ամբողջութեամբ կը մնայ ի գոյութեան։ Օրինակի համար, Եպիսկոպոսապետ մը կրնայ Հանրապետութեան մը Նախագահ ըլլալ, ինչպէս պատահեցաւ անցեալները. բայց երբ այդ պաշտօնը դադրի, անարատ կը մնայ իր Եպիսկոպոսապետութիւնը։

Առարկութեանց գալով, քաղաքական իշխաններուն համար Պատարագի մէջ միայն աղօթք կ'ըլլայ, ըստ առաքելական պատուէրին. «Առնել աղօթս մանաւանդ վասն Թագաւորաց եւ ամենայն Իշխանաց» (Ա. Տիմ. Բ. 1)։ Բայց պէտք է գիտնալ որ այդ աղօթքներն ու մաղթանքները եկեղեցական Պետերու յիշատակութեան բանաձեւէն և նոյն իսկ լաճախ պատարագէն դուրս կը կատարուին, և Ռուսիոյ մէջ իսկ Կայսեր համար կ'աղօթուի միայն «Որ օրհնես զայնոսիկ» ին մէջ։

Իսկ պարզ քահանայ Բաքիի գոյութեան յիշատակութեան գալով, բնաւ ստոյգ չէ որ պատարագի մէջ յիշատակուած ըլլան, քանզի կան ծերունադարձ կենդանի վկաներ, որ հաւաստեցին մեզ թէ բնաւ չէին յիշուիր. և ըստ աստուածաբանութեան ապօրինաւոր է այդ յիշատակութիւնը. իսկ եթէ երբեմն եղած է, յամենայն զէպս իրենց աշխարհական իշխանութեան համար եղած պիտի ըլլայ. Բայց սա չափը ուրանալ կարելի չէ թէ Պատրիարք բառը հոն փոխան Բաքիի գոյութեան պիտի ըլլայ, իբր անոր Հայ Թարգմանութիւնը եւ սեղմեալ իմաստով. ապա թէ ոչ՝ բուն իմաստով բոլորովին սխալ եղած կ'ըլլար։ Եւ նոյնպէս, տրամաբանական սխալ է պատճառաբանել թէ՝ քանի որ անոնք յիշատակուել են, ուրեմն բուն Պատրիարքն ալ, որ Բաքիի գոյութիւն չունի, պէտք չէ յիշատակուի։ Իմաստակութիւն (Sophisme) է այդ, կամ Տրամաբանութեան տգիտութիւն։ Ըսե՛լ կ'ուզուի ուրեմն որ Պատրիարքական եւ Եպիսկոպոսական հոգեւոր իշխանութիւնը Իսլամ Թագաւորի մը տուչութիւնն է. չեմ կարծեր որ զմոռի մէկը որ այսպիսի հերետիկոսութիւն դաւանի։ Պէտք չէ շփոթիլ ուրեմն Պատրիարքութիւն եւ Բաքիի գոյութիւնը. առաջինը՝ յԱստուծոյ է եւ ի Ս. Գահէն. երկրորդը՝

յժամ. Կայսրէն. առաջինը՝ հոգեւոր, երկրորդը՝ մարմնաւոր. առաջինը՝ ընդհանուր, անկախ եւ էական. երկրորդը՝ մասնական, կախեալ գլխաւորաբար հոգեւոր Պետ ըլլալէն, եւ պատահական: Այս է ահա Կաթողիկէ Վարդապետութիւնը, ուղիղ եւ ճշմարիտ. անկախ ո՛ր եւ է քմահաճոյքէ, զոր պարզաբանեց Արհի. Արքիարեան Արք.: Մենք բաժանեալ հասարակութեանց չենք նմանիր: Եւ ահա՛ ասոր համար է որ հազիւ մեր նոր Կաթողիկոսը կ'ընտրուի ու Ս. Աթոռէն կը հաստատուի, անմիջապէս հետեւեալ առաւօտ, — Բաթրիգութեան իրաւէն շատ առաջ, — Եպիսկոպոսոսնք եւ քահանայք, թիւ եւ Զայնաւոր Պատարագներու մէջ կը յիշատակենք զինքը Սրբազան Պապէն վերջը, այսպէս. «Եւ զերջանիկ ՊԱՏՐԻԱՐԺՆ մեր զԱ. Ա.»: Եւ մի՛ կարծէք որ միայն Հռոմ է որ հիմա,

Բաթրիգութենէն ինչալէն վերջն ալ, Ամհնապատիւ Թէրզեան Կաթողիկոսի կու տայ Պատրիարք տիտղոսը, իբր նշանակիչ իւր հոգեւոր Պետի իշխանութեան. — թէ եւ մեզ Կաթողիկէից ա՛յս միայն բաւական է եւ միայն պարտադրող. — այլ՝ Յոյները՝ Եկեղեցական եւ աշխարհական, Պատրիարք, Տեղապահ, Փոխանորդ, Լոգոթէթ եւայլն, ո՛չ միայն կու տան իրեն այդ տիտղոսը, այլ մեծաւ համակրութեամբ եւս կ'այցելեն իրեն իբրեւ Պատրիարքի եւ կը քաջալերեն զինքը ամուր կենալու Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութեան մէջ: Մի եւ նոյն Patriarche տիտղոսով կը գրեն իրեն Թագաւորներ, ինչպէս Սպանիոյ եւ Պելժիոյ, Նախարարներ՝ Գաղղիոյ, եւայլն. Դեպաններ. թո՛ղ զայլս. ամէնքը իմաստութեամբ եւ անկողմնակալութեամբ կը հաստատեն թէ Բաթրիգութենէ զրկուիլը չի նշանակեր բնաւ Պատրիարքութենէ զրկում:

Բայց կիրքը կը կուրցնէ: Քմահաճոյքով չուզելը, խոտովութիւն հանելը, հայոցելը, սրբապղծութիւն գործելը չի զօրեր ուսալ ընել կամ փոխել ճշմարտութիւնը, որուն էութիւնը անհպելի է եւ անվկանդ. ըմբոսանքներու կոյր քմահաճոյքը — բարեբախտաբար՝ վասն Եկեղեցւոյ, — չի կրնար խախտել Եկեղեց. կա-

նոններն ու անձերը, որ մի՛ միայն կախումն ունին Ս. Քահանայապետէն, որ Դերագոյն Գլուխ եւ Իշխան է Ս. Եկեղեցւոյ: Նա՛ կը կարգէ, Նա՛ կը պահէ. Նա ունի Իշխանութիւն՝ Քրիստոսի գառնուկներուն եւ ոչխարներուն վրայ. եւ Սնոր կը հնազանդին խընդութեամբ՝ ճշմարիտ Կաթողիկէ հաւատացեալք ի Հայս, եւ ի սփրւոս համօրէն Տիեզերաց:

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՍԱԿ

Ժ

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՓԱՌԱԽՈՐ ՆԱՀԱՍԱԿՈՒԹԵՆԷՆ ՎԵՐՋ
ՊԱՏԱՀԱՍՈՒ ԱՅԼԵՆԵՍԻ ՅԻՇԱՍԱԿԱՅ ԱՐԺԱՆԻ
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆԵՆԵՐ

Մինչեւ հիմայ, այն ժամանակին ակահատես վկանհրու առջեւ գործուած եւ մեր սկար ջանքով նկարագրուած անխիղճ խրժողժութիւնները տեսնելով մեր սիրտը կտոր կտոր եղաւ, մխիթարանքի եւ սփոփանաց եւ ոչ մի խօսք կամ գործ չտեսանք եւ չլսեցինք: Բայց հիմայ ժամանակն է որ նոյնպէս հանգիստես ըլլանք այն ուղղամտութեան, այն բարեպաշտութեան եւ միանգամայն գթոյ ու սիրոյ զգացմանց մեր կարծածէն աւելի բազմաթիւ անձերու, մանաւանդ թէ՛ պիտի ըսեմ, ընդհանուր ժողովուրդին՝ եւ նոյն իսկ Պոլսոյ Քրիստոնեաներուն ամբողջութեանը մէջ, զորոնք մենք անդգանք կը համարէինք եւ կամ անտարբեր երանելի Տէր Կոմիտասայ վկային խնդրոյն նկատմամբ:

Բացարձակապէս խաբուած ենք, բոլորովին հակառակը վկայեցին մեզի թէ՛ Ֆէրեօլ Գաղղիական Դեպանի, թէ՛ Մխիթարայ Արքահօր որդին Հ. Մատթէոսի եւ ուրիշ մեր զբոխաւոր պատմիչներու մանրակրկիտ եւ խուզարկու քննութիւններով մեզի յանձնած պատմութիւնները: Հակառակ մեր մինչեւ հիմայ տեսած եւ լսածներուն, Երանելոյն համակիրները եւ առաքինութեանցը ճշմարիտ գնահատողները բազմաթիւ էին. ի բաց առ-

եալ Լատին և Հայ Կաթողիկէները որոնց արդէն ամէն ինչ ծանօթ էր և միայն ժամանակին զԺողակ պարագաները թոյլ չէին տար որ համարձակ կերպով հրապարակ ելլէին, նոյն իսկ Յոյն ազգը որ վերջին ժամանակները այնպիսի վեհանձնութիւն և կրօնական և մարդասիրական զգայմունք ցոյց տուաւ որ, ինչպէս իր տեղը պատշաճ եղանակաւ պիտի պատմենք, մենք Կաթողիկէայքս, չպիտի մոռնանք, և մեր երախտագէտ սրտերէն յաւէտ չպիտի ջնջուի անոր արժանի յիշատակը:

Իսկ էջմիածնական ժողովրդեան և առ հասարակ նոյն հասարակութեան մասին, պէտք է ըսենք առանց վարանելու թէ՛ ի բաց առեալ մէկ երկու Պատրիարքները, և առանց մէջ չարութեան մասին առաջնութիւնը վայելող Յովհաննէս Զմիւռնացին, տառնեակ մը քահանաները և ափ մը ստորին կարգի օրապահիկի հետամուտ և բախտախնդիրները, մեծագոյն և ազնուական մասը, սրտանց կ'ատէին ու կը քամահրէին այն ապերախտներուն յոռի ընթացքը և արարքը և անոր մասնակցած չէին ընաւ: Արեւմտեան ըմբռնող, որովհետեւ շատ մը բարի քահանաներ և վարդապետք, ինչպէս վերոյ յիշեալ մաքուր ժողովուրդը, ընաւ համամիտ չէին այն եղեւնագործութեանց, սակայն իրենց իւրեւ չէղոք կամ անտարրեր մնալուն բուն պատճառը անհոգեղութեան երկիւղն էր այն Զմիւռնացւոյն՝ որ պատուհաս Աստուծոյ էր, Ներոն մ'էր, գիշատիչ գազան մ'էր: հետեւաբար անձնապահ ըլլալու հարկադրուած էին:

Հաղիւ թէ՛ Երանելի Տէր Կոմիտաս՝ նահատակին ոտք Գլուխը՝ իրանէն բաժնուելով վար թաւալած էր, և ոտքը արիւնը հողը կ'ոռոգէր, քինախնդիրներու ցած ջոկատը, հետաքրքիր խառն խաժամուժը ցրուիլ սկսաւ: Երանելի Տէր Կոմիտասի երկու ընկերներն ալ որ արեան հոսումէն ահարեկած թուլցած էին, մոռնալով իրենց վարդապետին ներշնչած հոգեպարար և կազդուրիչ խթանները, մեկնած էին: այն արեան դաշտին վրայ հաւատարիմ, և պարտաճանաչ Լատին, Հայ-Կաթողիկէ, էջմիած-

նական և Յոյն խումբ մը բարեպաշտ անձնաւորութիւնք մնացած էին: առանց մէջ էր նսեւ Մխիթար Արքահօր զաւակներէն մին, այսինքն Հայր Եղիա վարդապետը: որ նոյն տարւոյ սկիզբը Պոլիս զրկուած էր առաքելութեան համար, և բոլոր պատմութեանս գրեթէ ականատես վկան, և Հ. Մատթէոս Մխիթարեան ուխտի ժամանակագրին կենդանի ձայնով տեղեկագրողն ինքն եղաւ, և շատ մը անգին մատուցներ եւս ժողովելով տարաւ ի Վանս, որուն վրայ իր տեղը յիշատակութիւն մը պիտի ընենք: Ասոնք երկիւղածութեամբ արդէն սուրբ աւարի սկըսած էին: Մաքուր թաշկինակները, վարչամակները կը թաթաւէին սուրբ արեան մէջ, մեծ հողածութեամբ՝ և ջերմեռանդութեամբ պահելու համար ի յիշատակ այն հաւատոյ Դիւցազնոյն: Ոմանք ալ զահճին դժբաժն տալով՝ Երանելւոյն արիւնաթաթաղ գետտները գնեցին իւրեւ մեծ գանձ, վերջապէս այն սուրբ մատուցներէն ինչչափ որ կրցան ձեռք անցունել, առին: Գրիտտոնէից ուրախութիւնը մեծ եղաւ, որովհետեւ Կ. Պոլսոյ առաջին նահատակը եղաւ նա իր Ս. արիւնը թափելով ի վկայութիւն ուղղափառ Ս. Հաւատոյ: Բայց աւելի մեծ ուրախութեան առիթ եղաւ այս երկնից Հըրեշտակաց համար, որոնք այն Ս. հոգին իրենց թեւերուն վրայ առնելով անպատում ցնծութեամբ և փառօք, Մարտիրոսաց դասին մէջ յաղթութեան դափնիով և Մարտիրոսաց պսակով տարին նստուցին իրեն սահմանուած աթոռին վրայ՝ այն յաւիտենական երանութեան օթեւանին մէջ որ պատրաստուած է Ամենակալին Աստուծոյ սիրելիներուն համար, զոր ինք այնչափ եռանդով կը քարոզէր Սուլու Մանասզրի Ս. Դէսրգայ Եկեղեցւոյն մէջ և ի մասնաւորի իւր վերջին վայրկեաններուն՝ բացատրած էր կենդանի գոյներով այն երկու ապերախտ, վախկոտ և տկար ընկերներուն:

Երկինք ոչ նուազ գորով ունեցաւ այդ տեսարանին վրայ: Ինչպէս վերը պատմեցինք, ամիսներէ ի վեր ամպերն ամուլ մնացած էին և անձրեւի կաթիլ չէր եկած Պոլ-

սոյ վրայ . Տեառն Կոմիտասայ նահատակութեան պահուն յանկարծ մեղմով ցողել սկսաւ և շարունակեց մինչեւ երեք օր : Ուստի Երանելի նահատակին մարմինը ըստ պետութեան օրինաց երեք օր մնաց այն բացօթեայ հրապարակին վրայ առանց տեղունելու , փայլուն , թարմ և անուշահոտութիւն բուրելով իւր շուրջը . և յիրաւի արժանահաւատ վկաներ են որ հետեւեալ գիշերը այն սուրբ մարմնոյն վրայ նոյնպէս լոյս ծագելը պատմեցին : Այս երեք օրերու միջոցին մէջ Երանելոյն թշնամիք իրենց զայրոյթը տակաւին չկարենալով զսպել գիմեցին Եպարքոսին և խնդրեցին որ Տէր Կոմիտասի մարմինը ծով նետուի և թոյլ չտրուի որ ժողովուրդը իբրեւ Մարտիրոսի մասունք , այն սուրբ մարմինը մեծարանքով թաղէ հասարակաց գերեզմանատան մէջ :

Ահաւասիկ այդ ծայրայեղութեան հասած էին այն ժամանակի Հայ Եկեղեցականութեան մէկ մասին զգուելի և վայրաքարշ կրքերը : Այսու հանդերձ Եպարքոսը՝ Քրիստոնեայ չըլլալով հանդերձ գանեցաւ այլ եւս Հայ կղերականութեան ծայրայեղ բարբարոսութենէն , մերժեց իրենց խնդրանքը :

Արդէն Եպարքոս Այլ բաշան , Երանելի Տէր Կոմիտասի անմեղութիւնը ճանչցած ըլլալով հանդերձ , հակառակ իր խղճին , ինչպէս մինչեւ ցարդ առ հասարակ այդպիսի պաշտօնէից մէջ դժբախտաբար պատահիլը կը տեսնուի , մահու վճիռը տուած օրէն սկսեալ , երկիւղալից՝ երազներ կը տեսնէր , եւ իր քունէն սարսափով կ'արթննար , առանց ազատելու իւր օձիքը Երանելոյն ձեռքէն որ կենդանութեան ժամանակ առեանի առջեւ անվհեր ձայնիւ սպառնացած էր թէ իւր արիւնը իրմէն պիտի պահանջէր , ուստի Չօլուը Այլ՝ հանդարտ քնոյն մէջ յանկարծ կը տեսնէր Երանելին առջեւը ցցուած , որ երկու ձեռքերով խղճամահ ընելու աստիճան Եպարքոսին վիզը սեղմելով կը տանջէր զինք : Հետեւաբար այն ժպիտն խնդրարկունքը մերժեց և Երանելոյն՝ շուրջ 16 տարեկան Աղաւնի անուն գտեր մարդասիրաբար չընտրհեց հօրը մարմինը , հրամայելով որ զայն

թաղեն ինչպէս որ իրենց հաճոյ կը թուէր . որովհետեւ Աղաւնին քաջութիւնը ունեցած էր ներկայանալու Եպարքոսին եւ իրեն ըսած էր . «Դուն որ անիրաւութեամբ Տէր Հօրս գլուխը կտրել տուիր , հրաման տուր գէթ որ իւր մարմինը թաղենք» : (*)

Այդ հրամանը կայծակի արագութեամբ տարածուեցաւ Պոլսոյ ամէն կողմը : Երկուշաբթի օրը 27 Հոկտ . (Հ . Տ . — 7 Նոյ . Ն . Տ .) Շատ մը Քրիստոնեայներ , որոնց մէջ բազմաթիւ էջմիածնականներ ալ կային , ի մասնաւորի Յոյներ , ուրախութեամբ գնացին Բարմազ Գաբու եւ Երանելոյն մարմինը իրենց բազկացը մէջ բառնալով , եւ սուրբ Գլուխը ուրոյն ծածկոցի մէջ փաթթելով Գում Գաբու եկան Պատրիարքարանի առջեւ եւ դագաղ մը խնդրեցին , որ չտրուեցաւ իրենց : Ուստի իրենց ճամբան ուղղելով սուրբ մարմինը տարին մինչեւ Սամաթիա : Բայց Հայոց այդ բիրտ արարքը Յունաց Պատրիարքին ախանջը հասնելով , յօժարակամ հրաման տուաւ որ Սամաթիոյ Յոյն Եկեղեցիէն թէ՛ դագաղ մը չնորհուի եւ թէ՛ այն ուղարկաւորութեան հանդէսը ամենայն փառաւորութեամբ կատարուի : Իր կողմանէ Յոյն Պատրիարքը որ էր Կեսարիոյ Առաջնորդ Կիպրիանոս Եպսկ . ը , ի պատիւ Երանելոյն զրկեց շատ մը Մետրապոլիտ Եպիսկոպոսներ , Քահանայներ դպիրներ եւ առաջին կարգի սպաններ եւ Երանելոյն մարմինը փառաւոր յուղարկաւորութեան շքեղ հանդէսով մը տարուեցաւ ի Պալլադը Հայոց գերեզմանատունը : Այդ յուղարկաւորութեան մէջ չկար եւ ոչ մէկ քահանայ էջմիածնական , որովհետեւ կը սարսափէին այն Զմիւռնացի բռնակալ Պատրիարքէն , եւ արարողութիւնը յունաբէն վեհափառ ծէսով եւ երգեցողութեամբ կատարուեցաւ :

(*) Երանելի Տէր Կոմիտաս եօթը զաւակ ունէր , որոնցմէ երկուքը մահը , և հինգը աղջիկ : Մանչերէն առաջինը Նահապետն էր որ ի Հռոմ վախճանեցաւ 1708ին . երկրորդին անունն էր Յովհաննէս , որ ապա թարգմանի պաշտօն ունեցաւ ի Նէապոլիտ : Աղջիկներու մէջ առաջինն էր Թարթիւրչիա , երկրորդն էր Հրապիտիկ , երրորդը Սողոմէ , չորրորդը Մարիանն , կրտսերն էր Աղաւնի :

Նահատակիս անշունչ իրանը՝ իր ընտանեաց սեփական շիրիմին մէջ ամփոփուեցաւ . իսկ անոր պատուական Դլուխը՝ Յոյները առնելով իրենց Եկեղեցին տարին :

Այն օրը Եէտի Դուլէէն դուրս՝ ծովեզերքը առագաստանաւ մը կը շրջէր ալեաց վերայ քմահաճոյ տատանումներով . այդ առագաստանաւը պատրաստութիւններ կը տեսնէր յաջորդ գիշեր իր մէջ ընդունելու մեծ զանձ մը զոր պիտի փոխադրէր ի Ֆրանսա , Գաղղիական Դեսպան մեծահռչակ Ֆէրեօլ Մարգիզի հրամանաւ : Սոյն Դեսպանը՝ Կ. Պոլսոյ մէջ իւր պաշտօնավարութեան ժամանակ , նա մանաւանդ Տեառն Կոմիտասայ գործոյն մէջ մեծ գեր մը խաղցած էր յօգուտ ուղղափառ կրօնից , եւ ի մասնաւորի՝ Կաթողիկէ-Հայոց , ինչպէս իւր առ Լուզովիկոս ԺԴ . զրաձ տեղեկագիր նամակները կը վկայեն , աքսորել առւած էր Կ. Կրօնից ուրերիմ թշնամին Աւետիք Պատրիարք ձեռամբ Մէհմէտ Պալթաճի Եպարքոսի , ի պատիժ այն յանդգնութեանը զոր ունեցած էր Գաղղիոյ Թագաւորին առ իր հասցէն (Ֆէրեօլ) ուղղած մի նամակը բանալու :

Արդէն գիշերը վրայ հասած էր , քաղաքիս Եէտի Դուլէի մեծ դրան պահապանապետէն պէտք եղած հրամանը Դեսպանը առած եւ ամէն ինչ նախապատրաստած էր . ուստի առ այս կարգուած գեպանատան պաշտօնէից ձեռք Սամաթիոյ Յոյն Եկեղեցւոյն նուէրներ առաքելով Տեառն Կոմիտասայ պատուական Դլուխն ալ ստանալով , գիշերանց մինչ փողոցները թափուր էին եւ երթեւեկը զագրած գնացին այն ցորեկին թաղուած մարմինը իւր շիրիմէն հանելով առագաստանաւին յանձնեցին . եւ նաւը իւր ուղղութիւնը ըննեց դէպի Տարսուսէլ :

Հոս կրնայինք պատուական ընթերցողաց ծառայութիւն մի մատուցանել վերոյիշեալ Դեսպանին առ Լուզովիկոս ԺԴ . , առ Սըրբազան Քահանայապետ Կղեմէս ԺԱ . այդ հալածանքի եւ ի մասնաւորի Երեմիա Զէլէպի Բէօմլըքճեանցի կրտսեր եղբայրը Տէր Կոմիտաս քահանայի նկատմամբ զրաձ շատ մը հետաքրքրական եւ մեծ արժէք ունեցող նամակները ընդօրինակելով զնեւ , ինչպէս նաեւ Տարածման Հաւատոյ նախագահ Կարգինալ

Վսեմափայլ Սակրիքանտէի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ Մօնսէնեօր Ռաիմօնտօ Կալանիի փոխադարձ թղթակցութիւնները . եւ Կարգինալ Պօրճիայի առ եղբորորդին Տեառն Կոմիտասայ զրաձ նամակը , եւ ասոնց նմանները . սակայն մեր նպատակը ընդարձակ կենսագրութիւն մը յօրինել չըլլալուն , ասոնց բոլորը կը ձգենք աւելի կարող եւ պատուաբեր գրիչներուն : Բաւ է մեզի համար որ մեր տկար եւ խեղճ գրչովը — թէեւ հնար է յանդգնօրէն , — սակայն գէթ ճամբայ բացած կ'ըլլանք եւ խորունկ քունէ պթափեցուցած այն մեծ գրչի եւ մատաւորական կարողութեան տէր անձնաւորութիւնները , որ մեր դարուս մէջ անպակաս են եւ կրնան այս տեսակ սրբանուէր մի ուսումնասիրութեամբ զբաղիլ ընդ երկար :

Հոս պատշաճ կը դատենք յիշել , քաղելով Վենետիկոյ Միթիարեան Վեր . Հարց ձեռագիր գրութիւններէն , մի քանի մեծարժէք առարկաները որք կը վերաբերին Երանելի Տեառն Կոմիտասայ քահանայի , եւ որք մեծ պատուով ցարդ կը պահուին Ս. Ղազարու աշխարհահռչակ Վանքին մէջ :

1. Փիւն Տեառն Կոմիտասայ վկային առանց կնիւղի , զոր Վ. Հ. Մանուէլ՝ վրկային քննանիքէն դրամով գնելով առաքած էր 1708ին , եւ զոր Միթար Աբրահայրը մեծ տօնախմբութեանց օրերը արարողութեանց ժամանակ դասի մէջ վրան կ'առնէր :

2. Երանելոյն վերարկուին մէկ մասը որ հոն կը պահուի :

3. Թղթեայ ծրարի մը մէջ պահուած Երանելոյն գերեզմանի ափ մը հողը :

4. Երանելի Տեառն Կոմիտասայ արիւնաթաթախ պատուական Դլուխն ծրարին մէկ կտորը :

5. Երանելի Տէր Կոմիտաս քահանայի անձնական կնիքը :

Վերջապէս Երանելի վկային մի ձեռագիր ոտանաւորը որ այսպէս կը սկսի .

Ո՛վ արագսն Պեղ պատուական,
Կատարեցի ըզոյդ հրաման,
Եւ Կոմիտաս անձն անարժան
Պիտակ երեք Տան Բեօմլըքճեան :

Դեռ ուրիշ շատ տեղեր կը պահուին Երանելոյն թէ՛ այլեւայլ ձեռագիրները թէ՛ ղգեստներուն կտորները . ինչպէս մեծ պարծանք է Բերայի մեր Հայ-Կաթողիկէ Պատրիարքարանին Դիւանատան որ մեծ խնամքով կը պահէ Տեառն Կոմիտասայ վկային արիւնաթաթախ ղգեստին մէկ կտորը :

(Շարունակելի)



ԹՈՒՂԹ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՊԻՈՍ Ժ. ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ
ՈՐՈՎ ԸՆԴՀ. ՅՈՒՆԵՍԿԵԱՆ ՄԸ ԿԸ ՍԱՀՄԱՆԷ
ՄԵԾՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՍԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇՆՈՐՀԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
ՓԻՇԱՑԱԿԻՆ ՀԱՄԱՐ

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.

Ողջոյն եւ առաքելական օրհնութիւն
ամէն քրիստոնեայ հաւատացելոց
որոնք պիտի տեղեկանան
մեր ներկայ բուրքին:

Յիշատակը մեծ և բարենշան գէպքին ուրով վերջապէս խաղաղութիւն շնորհուեցաւ Եկեղեցւոյ, ասկէ տասնըվեց դար առաջ, մեծ ցնծութեամբ կը լեցնէ ամէն Կաթողիկէ ազգերը, և անոնց կ'ազդէ այս առիթով բարեպաշտական գործեր ընել: մանաւանդ զմեզ կը դրդէ բանալու երկնային շնորհաց գանձերը: որպէս զի այսպիսի հանդէսէ մը ընտիր և առատ առատ պտուղներ քաղուին ի Տէր: Պարտ է արդարեւ և կարի պատշաճ, միահամուռ տօնախմբել Մեծն Կոստանդինոս Կայսեր՝ Սաչին փառապանծ գրօշով՝ Մաքսնտիոսի յաղթելէ վերջ, Միլանի մէջ հրատարակած հրովարտակը, որ Քրիստոնէից դէմ յարուցուած դժուակ հալածումներուն վերջ տալով, պարգեւեց անոնց ազատութիւն, որուն գինը եղաւ աստուածային Փրկչին և մարտիրոսաց արիւնը: Այն ատեն,

վերջապէս, պատերազմող Եկեղեցին վայելեց այն յաղթանակներդ որ, ամէն դարու մէջ, կը յաջորդեն ամէն տեսակ հալածումներու. և այդ օրէն սկսաւ իր բարիքները աւելի առատօրէն ընձեռել մարդկային ընկերութեան: Որովհետեւ մարդիկ տակաւ առ տակաւ կուռքերու մոտի պաշտամունքը թողլով, օրէ օր աւելի մտցուցին Քրիստոնէական կեանքի կարգն ու կանոնը իրենց օրէնքին, բարքին ու կրթութեան մէջ. և այսպէսով արդարեւ թիւնն ու ընկերաիրութիւնը միանգամայն բարգաւաճեցան աշխարհիս վրայ:

Ուստի մեզի պատշաճ թուեցաւ, այս եւրանաւէտ պարագային մէջ, որ մեզի այսօր մեծ եղելութիւն մը կը յիշեցնէ, եռանդազին օգնութեան կոչել զԱստուած, իր Կուսամայրը և միւս Երանեալները, մանաւանդ Առաքեալները, որպէս զի բոլոր ազգերը փառք և պատիւ տան Եկեղեցւոյ. մոռնին այս փառաւորեալ Մօր ծոցը. ետ մղեն, իրենց միջոցներուն համեմատ, այն մոլորութիւնները որոնցմով հաւատքի անխորհուրդ թշնամիները կը ջանան անոր ջինջ պայծառութիւնը մթագնել խաւարասքօղ. յարին Հռոմի Քահանայապետին ամենամեծ հպատակութեամբ. և վերջապէս, տեսնեն վստահօրէն թէ Կաթողիկէ կրօնքը ամէն բանի ապաստանն ու օժանդակն է: Այն ատեն կարելի պիտի ըլլայ յուսալ որ մարդիկ վերջապէս, Սաչին վրայ սեւեռելով իրենց աչքերը, այս փրկարար նշանով թէ՛ Քրիստոնեայ անուան հակառակորդները և թէ սրտի անզուսպ ցանկութիւնները յաղթահարեն: Եւ որպէս զի խոնարհ ազօթքները, որ այս բազմադարեան հանդէսի միջոցին, Կաթողիկէ աշխարհին մէջ պիտի մատուցուին, առաւելապէս շահեկան ըլլան հաւատացելոց հոգեոր բարւոյն, որոշեցինք ճոխացնել զանոնք Լիակատար Ներողութեամբ, Յոբելեանի եղանակով, ջերմապէս յորդորելով Եկեղեցւոյ բոլոր զաւակները միացնելու իրենց պաղատանքները և բարեպաշտական հրահանգները՝ Մերիններուն, և առատապէս օգտուելու այն շնորհքն որ իրենց կ'ընծայուի այս յորելեանով՝ իրենց հոգեկան շահերուն և կրօնի օգտին համար:

Ասոր համար, վստահելով ամենակալ Աստուծոյ ողորմութեան, եւ երանելի Պետրոս եւ Պօղոս Առաքեալներուն ճոխութեան վրայ, եւ զօրութեամբ՝ բանալու եւ փակելու իշխանութեան, զոր Աստուած մեզի տուած է՝ հակառակ մեր անարժանութեան, այս մասին՝ Մեր պատուարժան Եղբայրներուն, Հռովմէական սուրբ Եկեղեցւոյ Կարգնալներուն, ընդհանուր Հաւատաքննիչներուն խորհուրդը լսելէ յետոյ, կու տանք կը շնորհենք Լիակատար Ներողութիւն իրենց բոլոր մեղքերուն, Յորեւանի եղանակով, երկու սեռի ամէն եւ իւրաքանչիւր հաւատացեալներուն որ կը բռնակին մեր Օգոստոսիա քաղաքին մէջ կամ հոն կու գան Նոր կիրակիէն ներկայ տարուան, ուր պիտի սկսին Եկեղեցւոյ խաղաղութեան յուշարար բազմադարեան հանդէսները, մինչեւ Ս. Կոյս Աստուածածնի Անարատ Յղութեան տօնը՝ ներփակարար. պայմանաւ որ երկու անգամ այցելեն Լատերանի Ս. Յովհաննէսի, Ս. Պետրոս Առաքեալատին, եւ պարիսպէն դուրս Ս. Պօղոսի Մայր Եկեղեցիները, եւ հոն Աստուծոյ աղօթեն, քիչ մը ատեն, ըստ Մեր դիտաւորութեանց, Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ Առաքելական Ս. Գահուն բարդաւածման եւ փառաւորութեան համար. հերետիկոսութեանց ջնջումին եւ մոլորեալներուն դարձին համար. Գրիստոնեայ Իշխաններու միաբանութեան, ամբողջ հաւատացեալ ժողովուրդին խաղաղութեան եւ միութեան համար. եւ այս ժամանակամիջոցին, ապաշխարութեան խորհուրդով հոգինին մաքրելէ յետոյ, ճաշակին երկնային սեղանէն, եւ ասկէ զատ, ողորմութիւն մը ընեն, իրենց կարողութեան համեմատ, աղքատներու կամ, եթէ կը նախընտրեն, ի նշանաւ բարեպաշտական ձեռնարկներու. Հոսմ գալ չկրցողներուն կը շնորհենք նոյն Լիակատար Ներողութիւնը, միայն թէ, միեւնոյն ժամանակամիջոցին, վեց անգամ անպատճառ այցելեն իրենց տեղւոյն Եկեղեցին կամ Եկեղեցիները, որ միանգամ ընդ միշտ պիտի որոշուին վիճակաւորէն. եւ կատարեն ամբողջովին միւս բարեպաշտական գործերը զորս վերը նշանակեցինք:

Կը շնորհենք նաեւ թոյլտուութիւն մերձեցնելու, նոյն Լիակատար Ներողութիւնը, այն հոգիներու, որ Աստուծոյ հետ սիրով մրացած ելեր են աշխարհէ:

Կը շնորհենք որ նաւորդները եւ ճամբորդները, երբ ժամանեն իրենց բնակավայրը կամ համին իրենց ճանապարհին մէկ որոշ տեղը, կարենան շահիլ նոյն Ներողութիւնը, կատարելով վերոյիշեալ գործերը եւ այցելելով վեց անգամ իրենց գտնուած տեղւոյն մայր կամ գլխաւոր կամ ժողովրդապետական Եկեղեցին:

Երկու սեռի եւս կրօնաւորք, նոյն իսկ արգելափակները, եւ ամէն աշխարհականներ եւ աշխարհիկ կամ կրօնաւոր Եկեղեցականներ, որ կամ գերութեան մէջ կամ բանտը գտնուելով, եւ հիւանդութենէ կամ ուրիշ ո եւ է պատճառէ մը արգիւտուելով, չեն կրնար կատարել վերը գրուած գործերը, թող դիմեն իրենց խոստովանահօր, որպէս զի փոխէ նոյն գործերը, կամ ուրիշ ժամանակի մը ձգէ, ապաշխարողին հարաւորութեան համեմատ:

Կը շնորհենք նոյնպէս որ խոստովանահայրը կարենայ Սուրբ Խորհուրդին մերձեցնել տնօրինել դեռ եւս առաջին Հաղորդութիւն չառնող տղաները:

Կը շնորհենք որ ամէն եւ իւրաքանչիւր հաւատացեալ, ըլլայ աշխարհական, ըլլայ Եկեղեցական, աշխարհիկ եւ կրօնաւոր կըղերէ, որ եւ է, նոյն իսկ յատուկ յիշատակութեան առանձնաշնորհը ունեցող կարգէ կամ Հաստատութենէ, կարենայ ընտրել, Յորեւանի Ներողութիւնը վասակելու համար, հաւանեալ աշխարհիկ կամ կրօնաւոր խոստովանահայր մը: Պիտի կարենան նոյնպէս իրենց խոստովանահայր մը ընտրել կուսանք, մայրապետներ, նորնծաներ եւ ուրիշ միասին ապրող բարեպաշտ կանայք, միայն թէ խոստովանահայրը մայրապետաց համար հաւանեալ ըլլալու է:

(Շարունակելի)

Ի Ն Կ Ի Լ Թ Է Ր Ր Ա Տ Ա
30 ԳԱՏԱՐ ԲՐՈԹԷՍԹԱՆ ԿՐՈՆԱԻՈՐԱՐԸՆ
Վ Է
37 ԲԻՇԵԼԻԻՔ ՊԻՐ ՄԱՅՐԱՊԵՏ ՄԱՆԱՍՐԸՐԸՆԸՆ
ԳԱԹՕԼԻՔ ՄԷԶԷԴԻՆԻ ԳԱՊՈՒԼ ԻԹՄԷԼԷՐԻ

Հիւանի նիյէթ իլէ Ալլահը արահանլար մութլազա ծոռ պուլուրլար: Տինսիլլիքտէն մէզհէպէ ալտէթ իթմէք, միւնքիլլիքտէն Ալլահա տէճոմէք, պիր վազըթ գապուլ վէ իգրար իտուպ տա, սոնրա զայիպ իաիլէն իթիգատ ու իմանը թէքրար պուլմազ, հերէտիկուսըզ զուլմէթինաէն հագիգաթ նուրընա կէչմէք հէք ճէնապը Ալլահըն պիրէր լուծֆը մախսուսը իլահիսի տիր. պու ինքեար օլու-նամազ: Փագաթ պու լուծֆա իթիյաճը օլանլար բէք չօզ իսէ տէ, հէքսի նայիլ օլամայուպ, անճագ ինսանի սայդըլարը նազարը իթիպարա ալմամայա միւհէյեա օլանլար, իմանըն, սէմէրէյի ազլ օլմայուպ, պիր մէվ-հիպէյի իլահիյէ օլտուղընա գանի օլարագ անը արահանլար օլուծֆը ճէլիլէ մազհար օլուրլար:

Պուրատա դարձլարընը թէպչիւր իթաիյիմիզ Բէնէզիկտեան կրօնաւորլար տախի հագիպթը արամայա պաշլուսըզլարը կիւնտէն պէրի դաաֆը ինսանիյի թանըմը, տուա վասըթասըլա Ալլահա միւրաճաաթտան կէրի տուրմամը վէ Ալլահըն ճնուրհէլարընա հիւանի նիյէթլէ գալպէրինի քիւշատէ պուլուստըրմը օլտուղլարընտան, Իսկիլթէրրանըն վազթըլա Բրօթէսթանըզը թէքք վէ Դաթօլիք մէզհէպինի գապուլ իյլէմիլ պուլուստան Նիւման կիպի, Մաննինկ կիպի մէշահ'ըլէրինին դարձլարընտա հիսս իթաիյիմիզ մէսրուրիյէթի, պու տէֆատա սահիպէ զէքէա վէ էրպապը ֆազիլէթ օլան պու կրօնաւորլարըն դարձլարըլա պէ թէքրար հիսս էտէրիզ:

